

ԻՍՊԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ (1936-1939)

ԱՐԾՈՒԻ ԲԱԽԶԻՆԵԱՆ (artsvi@yahoo.com)

Աշխարհի այլեայլ երկրներում բռնկուած ապստամբութիւններին եւ պատերազմներին հայ կամաւորների մասնակցութեան պատմութիւնը նորութիւն չէ: Բազմաթիւ են դէպքերը, երբ հայ մարտիկը կամաւորագրուել է իր համար երկրորդ հայրենիք դարձած երկրի ազատագրական պայքարին: Աւելին, եղել են դէպքեր, երբ յանուն գաղափարի այդ հայը որպէս կամաւոր մեկնել է երրորդ մի երկիր՝ մասնակցելու 'չարիքի' ոչնչացմանը:

Այդպիսին էր Իսպանիայի քաղաքացիական պատերազմը (1936-39). այն ժամանակ տակաւին չկար իսպանահայ համայնք, սակայն այդ պատերազմին մասնակցել են նաեւ հայ ժողովրդի զաւակներ՝ աշխարհի տարբեր երկրներից: Ժամանելով անձանօթ այդ երկիրը՝ նրանք ուս ուսի մարտնչել են յանուն իսպանացի ժողովրդի յաղթանակի ընդդէմ ֆաշիզմի. ուշագրաւ մի իրողութիւն, որը ցարդ մնացել է գրեթէ անձանօթ:

Հայերը մաս են կազմել «միջազգային բրիգադներ» (Brigadas Internacionales, խորհրդային իրականութեան մէջ՝ ինտերնացիոնալ բրիգադներ) զօրամիաւորումների կազմին, որոնք Իսպանիայի ազգային-յեղափոխական պատերազմի ժամանակ Հանրապետական Բանակի կազմում մարտնչել են ֆաշիստների եւ իտալա-գերմանական զաւթիչների դէմ¹:

ՍՓԻՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Իսպանիայի քաղաքացիական պատերազմին հայ կամաւորների մասնակցութեան մասին, որքան պարզել ենք, առաջինը յիշատակել է Հրաչիկ Սիմոնեանը²:

Իսպանիայի քաղաքացիական պատերազմին մասնակցած հայ կամաւորների մասին վկայում է Հայկական սովետական հանրագիտարանը. «4-րդ, 10-րդ եւ 14-րդ ինտերնացիոնալ բրիգադների կազմում մարտնչել են նաեւ սփիւռքահայեր, որոնք աչքի են ընկել Մադրիդի, Գուադալախա-

¹ 1937ին իսպանացի ապստամբներին ռազմական օժանդակութիւն են բերել տարբեր ցեղի աֆրիկացիներ՝ 78,000, գերմանացիներ՝ 29,000, իտալացիներ՝ 82,000, իրլանդացիներ, լեհեր եւ այլ ազգեր՝ 12,000: 212,000 օտար զինուորներ են եղել Իսպանիայում՝ կառավարական ուժերի դէմ կռուող («Օտար զինուորներ Սպանիոյ մէջ», *Արաքս*, 10 Ապրիլ 1937):

² Հրաչիկ Սիմոնեան, *Սփիւռքահայութիւնը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում*, Երեւան, «Հայաստան», 1968, էջ 415-16. նաեւ՝ Զաւէն Մըսըրլեան, «Սփիւռքահայ քաղաքական խմորումներ համաշխարհային Բ. պատերազմի նախօրեակին (1933-1939 թթ.)», *Հայկազեան հայագիտական հանդէս, հոյր. Է.*, Պէյրութ, 1979, էջ 91-92:

րայի (sic), Խարամայի, Էբրոյի մարտերում: Հերոսի մահով են ընկել Գրիգոր Հարոյեանը, Աշոտ Անդրեասեանը, Կայծակ Գարակէօզեանը, Գառնիկ եւ Թորոս Լորասեանները, Յովհաննէս Բոգդալեանը³, Պօղոս Պերճենցին, Յովհաննէս Թովալեանը, ու քաջաբար կոռուել Վահէ-Ազատ Ադամեանը, Ռուդոլֆ Շահինեանը, Խաչիկ Ամիրխանեանը, Յակոբ Մարտիրոսեանը եւ շար ուրիշներ: 1936ի Դեկտեմբերին «Միլիսիա ռոխա» (Կարմիր միլիցիա) թերթը գրեց հանրապետական բանակի սպայ կապիտան Վահան Չրքայեանի քաջագործությունների մասին: 1937-38ին Ֆրանսիայի հայ հասարակայնությունը հանգանակեց եւ Հանրապետական Իսպանիայի օգնության կոմիտեին յանձնեց 1 մլն. ֆրանկ»⁴: Յաւօք, նշուած անունները (մէկ բացառութեամբ) մեզ չեն հանդիպել այլ աղբիւրներում...:

Իսպանիայի քաղաքացիական պատերազմի շրջանում հայ մամուլը բազմիցս անդրադարձել է այդ խնդրին՝ երբեմն տեղ տալով հայ յօդուածագիրների գրությունների⁵: Այս պատմական իրադարձությունը որոշակի ազդեցություն է ունեցել հայերի վրայ՝ Հայաստանում թէ Սփիւքում: Այսպէս, հալէպահայ ազգային գործիչ Ռուպեր Ծեպէճեանի վկայութեամբ. «Սպանական յեղափոխությունն ու պատերազմի անցուդարձերն ալ երիտասարդութեան մօտ տեղի կու տային ցնցիչ անդրադարձումներու, հոգեկան զգօնութիւն՝ դժմոկրատիայի պաշտպանութեան անհրաժեշտութեան հանդէպ»⁶:

1937ի տունեալով՝ Իսպանիա գտնուող հայ կամաւորների թիւը եղել է մօտ 100: Ըստ Լոս Անջելոսի Նոր Ուղի թերթի՝ «Այս մարդիկը արկածախնդիրներ չեն, որոնք կը վարձուին զանազան բանակներու մէջ. ոչ մէկ կերպով: Անոնք կամաւոր են բառին ազնուագոյն իմաստովը. մարդիկ՝ որոնք կամաւորաբար իրենց կեանքը ի սպաս կը դնեն ժողովուրդներու ազատագրութեան համար եւ արիւնարբու ֆաշիզմի դէմ մղուող պայքարներուն: Թող այս քաջերը օրինակ ծառայեն մեզ ամէնու»⁷:

Ամերիկահայ համայնավարների Բանուոր թերթը 1937ի Ապրիլ 3ի թում հաղորդել է Միսաք Զելէպեան անունով հայ կամաւորի զոհուելու լուրը Յունուարի սկզբին Իսպանիայում: «Ընկեր Զելէպեան Ամերիկայէն Սպանիա մեկնող կամաւորական խումբին միացաւ 1936ի Դեկտեմբեր

³ Հաւանաբար Պոհճալեան:

⁴ «Ինտերնացիոնալ Բրիգադներ», Հայկական սովետական հանրագիտարան, հտր. 4, Երեւան, 1978, էջ 355-56: Էջ 355ում կայ նաեւ ֆրանսահայ կամաւորների լուսանկար:

⁵ Ասատուր, «Հերոս Ալբազարը», Հայրենիք, 2 Հոկտեմբեր 1936. նաեւ՝ Վարդգէս Ահարոնեան, «Ալբազարի եօթանասուն օրերը», Հայրենիք, 22-29 Հոկտեմբեր 1936. նաեւ՝ «Մատրիտ», Հայրենիք, 27 Դեկտեմբեր 1936:

⁶ Ռուպերտ Ծեպէճեան, Ինքնակենսագրություն. յուշեր եւ գործունէություն, Հալէպ, Վիլլէտ Ծեպէճեան Գրադարան, 1999, էջ 217-18:

⁷ Մէջքերում ըստ՝ «Սպանիոյ հայ կամաւորները»ի, Արագ, 25 Յուլիս 1937:

ամսուն: Ան կը պարկանէր Աբրահամ Լինքընի ջոկարին, որուն մէջ կը գտնուի նաեւ ուրիշ հայ բանուորներու խումբ մը: Ընկեր Չելէպեանը կը պարկանէր արագահարուածի խումբի մը եւ հմուտ էր այդ գործին մէջ: Ան սպանուեցաւ ֆաշիստներու կողմէ արձակուած ռումբէ մը»⁸:

1937ի Ապրիլի 23ին Բանուորին Իսպանիայից նամակ է ուղարկել թերթի խմբագիր Վահրամ Գէորգեանը: Նա Ամերիկայից Իսպանիա է մեկնել որպէս կամաւոր եւ մասնակցել Գուադալախարայի եւ Կորդոբայի ճակատամարտերին: Գէորգեանը վկայել է, որ հանդիպել է ֆրանսիական եւ բելգիական գումարտակի անդամ ֆրանսախօս մի հայի: Իսկ նրա բուլղարացի ընկերը տեղեկացրել է, որ 25 հայեր կամաւոր եկել են Բուլղարիայից, յանուն ժողովրդավարութեան պաշտպանութեան՝ իսպանական ֆաշիզմի դէմ կռուելու: Թուրքիայից եւս եկել են միքանի հայեր, որոնք միացել են միջազգային բրիգադին, չորս հայ էլ եղել է «Աբրահամ Լինքըն» գումարտակում⁹: «Մեր ժողովրդական բանակի յաղթանակներն ու յաջողութիւնները կ'ոգտւորեն մեզ, նոյնպէս բոլոր անոնք, որոնք ֆաշիզմի դէմ կը կռուին Սպանիայէն դուրս: Մեր ընկերները մարտունակութեան սքանչելի ապացոյցներ փոփոխ Կուադալախարայի եւ Քորդոբայի ճակատներուն վրայ: Տնցող յաջողութիւնը, որ մեր յաղթական բանակը ունեցաւ, ապացոյց մըն էր, թէ կարգապահ եւ կեդրոնացեալ հրամանատարութեան փակ մարզուած բանակները ինչե՛ր կարող են ընել: Ասիկա պատահական չէր, այլ պարտաւոր ամիսներու անընդհատ աշխատանքին անոնց, որոնք գիտէին թշնամիին դէմ կռուիլ երկու ճակատի վրայ, զինուորական եւ քաղաքական»¹⁰:

Իսպանիայի հայ զինուորներից շատերը չեն կարողացել վերադառնալ իրենց բնակած երկրները: Շատերն անցել են Ֆրանսիա, որտեղ մնացել են համակենտրոնացման ճամբարներում: Այս մասին վկայել է իսպանական հայ վետերաններից Յակոբ Մարտիրոսեանը՝ ամերիկահայ կամաւոր Յովհաննէս Աղամեանին գրած նամակում, հրատարակուած 1939ին, ամերիկահայ *Լրաբեր* թերթում¹¹: Աւելորդ չենք համարում այն մէջբերել գրեթէ ամբողջութեամբ.

Նախ եւ առաջ ձեր որպիսութիւնը կը հարցնեմ: Եթէ զիս հարցնելու ըլլաք, ողջ եւ առողջ եմ: Ահաւասիկ, սիրելի ընկերս Յովհաննէ՛ս, Սպանիայէն Ֆրանսա անցած եմ: ԱՅՍ ՏԵՂ ՔԱՇԱՄՆԻՍ ՄԻ ՄԻԱՅՆ ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ: Այստեղ, Ֆրանսայի հայկական ընկերութիւններէն մեզի ո՛չ հասնող կայ, ո՛չ ալ փնտռող: Սիրելի ընկերս Յովհաննէ՛ս, քեզմէ շատ կը խնդրեմ, որ ստորեւ

⁸ «Հայ Կամաւորներ... Սպանիոյ Մէջ», *Արագ*, 14 Մայիս 1937:

⁹ «Ընկեր Վահրամ Գէորգեան Կը Գրէ Հերոսական Սպանիայէն», *Նոր Ուղի*, 11 Յունիս 1937, նաեւ՝ *Արագ*, 1 Յուլիս 1937, էջ 2:

¹⁰ Անդ: Վահրամ Գէորգեանը զոհուել է 1937ի Յուլիսին (Սիմոնեան, էջ 416):

¹¹ «Սպանական Հայ Կամաւորները Պէտք Ունին Մեր Օգնութեան», *Լրաբեր*, 18 Մայիս 1939:

գրուած անունները հայկական Լրաբեր թերթի մէջ տպել տաս: Քեզմէ կը սպասեմ, որ Ամերիկահայ հակաֆաշիստ եղբայրներու կողմէ օգնութիւն մը դրկէք մեզի: Երբ Քաթալոնիան կորսնցուցինք, լեռներու վրայով հետիոտն Ֆրանսա անցանք: Եւ Ֆրանսացիները մեզի առին ու համակերպողնացման կայանը տարին: Հիմա մեզի գերիի պէս կը նային: Շատ գէշ վիճակի մէջ ենք: Կարծեմ, թէ դուք արդէն հոն թերթերու մէջ կը կարդաք: Վերջացնելով երկտողս, ջերմագին ողջոյններս կ'ուղարկեմ հակաֆաշիստ բոլոր Ամերիկահայ եղբայրներու: Վստահ եմ, որ անոնք պիտի չզլանան իրենց լաւագոյնը ընել մեզի համար¹²:

Մարտիրոսեանը յիշել է նաեւ իսպանական պատերազմին մասնակցած հայերի անունները՝ Արամ Ակոբեան, Արիստակէս Ակոբեան, Սեդրակ Ակոբեան, Գէորգ Արամեան, Դանիէլ Գազանճեան, Դաւիթ Դաւիթեան, Եդուարդ Թաշճեան, Վահան Կոստանեան, Վահան Վահանեան, Գառնիկ Քելէքեան:

Թէեւ այստեղ յիշուած է 11 անուն (Մարտիրոսեանը ներառեալ), թերթում գրուած է. «*Բացի այս 14 վերերաններէն, ուրիշ կայանին մէջ կը գտնուին չորս վերերաններ*»¹³:

Լրաբերն ընդառաջել է այս կոչին եւ բացել նուիրատուութեան մի սինակ, որտեղ արձանագրուած գումարները պէտք է ուղարկուեն «Աբրահամ Լինքըն» գումարտակի գրասենեակը՝ համակենտրոնացման կայանների հայ վետերանների համար: Յուլիսին արդէն հաւաքուել է 39.80 դոլար¹⁴:

1938ին Իսպանիայի ժողովրդին օժանդակելու կոչով հանդէս է եկել նաեւ Ուրուգուայի ժողովրդային Միութիւնը: Նրա անդամ Պետրոս Պարտիզպանեանը միութեան հաւաքներից մէկի ժամանակ կոչ է արել սատարել Իսպանիայի հակաֆաշիստական պայքարին. «*Բոլոր անտիֆաշիստներու տեղը պէտք է որ ըլլայ Ուրուգուայի ժող. Միութիւնը: ...Ամսական 20-50 սէնթով (°) եւ կամ հին եւ նոր հագուստներ նուիրելով, այդ կարող էք ընել դուք Սպանական օգնութեան կոմիտէի միջոցաւ: Այո՛, ընկերներ քաղաքացիներ, օգնե՛նք Սպանական արի ժողովուրդին, որ կարենան անոնք թաղել ֆաշիզմը Սպանիո մէջ: Ուրեմն ես ձեզ հետ միասին*

¹² Անդ:

¹³ Անդ:

¹⁴ «Կը պատասխանեն Սպանիայի հայ կամաւորներու դիմումին, ի նշան երախտագիտութեան», *Լրաբեր*, 13 Յուլիս 1939, էջ 2: Այստեղ նշուած է, որ տէր եւ տիկին Քեթաթիպեանները թերթին գրել են. «*Ի՞նչ անտարբերութեան ու զլացումի հանդիպած ըլլալու են Սպանիո (sic) մեր կամաւորները, որ «Լրաբեր»ի Մայիս 18ի թուի մէջ հրապարակած իրենց նամակով կ'ըսեն. արդե՞ս ք յանցանք մը գործեցինք Սպանիո (sic) համար կոռելով*»: Սակայն Լրաբերի վերոնշեալ թում նման խօսքեր չկան:

վերցնելով իմ բաժակը՝ կը խմեմ եւ կը գոչեմ՝ կեցցէ անպարտելի Սպանիան եւ անոր օգնող միջազգային ազատասէր ժողովուրդները»:¹⁵

1940ին Ամերիկահայ Երիտասարդական Միութեան (ԱԵՄ, Armenian Youth Association) կենտրոնական վարչութիւնը կոչ է յղել ամերիկահայութեանը՝ օգնելու Իսպանիայի կամաւորներին եւ գաղթականներին: Նշուել է, որ այդ կամաւորների մէջ կան 20 հայ երիտասարդներ, որ աշխարհի տարբեր երկրներից մեկնել են Իսպանիա՝ կռուելու ֆաշիզմի դէմ: Նրանց մէջ եղել են նաեւ տասնեակի չափ ԱԵՄի անդամներ՝ Աշոտը, Զորջը, Հերլըրը... Նիւ Եորքում հայկական յանձնախումբ է կազմուել՝ տեղի հայութեան մէջ հայ կամաւորների օգնութեան գործը կազմակերպելու համար¹⁶: Նոյն թուականի Ապրիլին Նիւ Եորքում կայացել է Իսպանիային նուիրուած խորհրդաժողով, որտեղ որպէս ԱԵՄի պատուիրակ մասնակցել է Գրէյս Շահինեանը: Նա վկայել է, որ ԱԵՄը լաւագոյն մարտիկներն է ունեցել Իսպանիայի ճակատներում¹⁷:

Իսպանիայում մարտնչած կանադահայ Դազլըս Պատրիկ Սթիւընզը իր *A Memoir of the Spanish Civil War: An Armenian-Canadian in the Lincoln Battalion. Canadian Committee on Labour History* հատորում,¹⁸ տեղեկութիւններ է հաղորդել նաեւ Իսպանիայում մարտնչած հայ կամաւորների վերաբերեալ: Սթիւընզը (Պատրիկ Տէր-Ստեփանեան, 1910–87) ծնուել է Հայաստանում, 1926ին ընտանիքով արտագաղթել է Կանադա: Իսպանիա է ժամանել 1937 Փետրուարին՝ համալրելով մօտ 500 կանադացի կամաւորների շարքերը: Նա որպէս հրետանաւոր, մատակարարման ղեկավար եւ ռազմական քննիչ ծառայել է 15րդ բրիգադի «Աբրահամ Լինքոլն» գումարտակում (այն ամերիկեան էր, սակայն ընդգրկուած են եղել նաեւ կանադացիներ): Սթիւընզը մի անգամ յայտնաբերել է, որ զինամթերքի պահեստի պատասխանատուն ամերիկահայ է Նիւ Եորքից՝ Բիլ Սահակեան անուամբ: Վերջինս խնդրել է իր հետ մնալ զինապահեստում եւ կազմակերպել է նրա տեղափոխումը¹⁹: Սթիւընզը յիշել է նաեւ գնդացրորդների խմբի ղեկավար Դաւիթեանին²⁰ եւ մէկ այլ հայի Մեսէչուսէջ նահանգի Ուորսթըրքադաքից, որը զոջալիս է եղել Իսպանիա գալու համար, թէեւ Սթիւընզը մշտապէս փորձել է ուրախացնել ու գօտեպնդել նրան: «Ես նրան ասացի, որ հենց հասնենք Ալարէս, ես գառ կը գնեմ ու մեր միջանի տղաների հա-

¹⁵ Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնդ 314, ցուցակ 1, գործ 19, թերթ 10:

¹⁶ «Կոչ սպանական կամաւորներու եւ գաղթականներու օգնութեան համար», *Լրաբեր*, 4 Մայիս 1940:

¹⁷ Կրէյս Շահինեան, «Քոնֆերանս Սպանիոն (sic) օգնելու», *Լրաբեր*, 7 Մայիս 1940:

¹⁸ Douglas Patrick Stephens, *A Memoir of the Spanish Civil War: An Armenian-Canadian in the Lincoln Battalion. Canadian Committee on Labour History*, 2000:

¹⁹ Անդ, էջ 38:

²⁰ Անդ, էջ 42:

մար հաճելի կերակուր կը պատրաստեն»²¹: Մէկ այլ արտասովոր հանդիպում է նրան սպասել ոտքով Ամոգեռա գնալու ճանապարհին, երբ կանգնեցրել է մի մոտոցիկլավարի եւ խնդրել իրեն հասցնել մօտակայ գիւղը: Վարորդն ասել է, որ ինքը Մարսէլից է եւ իմանալով Սթիւընզի հայ լինելը՝ իջել է մոտոցիկլետից, սեղմել նրա ձեռքը եւ ասել, որ ինքը նոյնպէս հայ է՝ ֆրանսիական 14րդ գումարտակից եւ մեկնում է Գուադալախարա՝ միանալու իր զինակիցներին: «Մօտենալով Ամոգեռային՝ մենք կանգ առանք մի սրճարանում ու մի-մի բաժակ խմեցինք՝ նշելու մեր ծանօթութիւնը: Յուսով եմ, որ նա ողջ մնաց պատերազմում ու ողջ-առողջ վերադարձաւ իր հարազատների մօտ»²²: Սթիւընզը նաեւ յիշել է, որ մի անգամ էլ բուլղարացի բժիշկ սպայ Մինկովը մօտեցել է իրեն, սեղմել ձեռքը եւ ասել, որ գիտի, որ ինքը հայ է, որ բժշկութիւն ուսանելիս շատ լաւ հայ ընկերներ է ունեցել եւ որ եթէ Սթիւընզը որեւէ խնդիր ունենայ՝ ինքը կը փորձի ամէն կերպ օգտակար լինել իրեն²³:

Իսպանիայում մարտնչած մէկ այլ հայորդու՝ Հայկազ Խաչատուրեանի մասին վկայել է Թորոս Թորանեանը, որին հանդիպել է Բէյրութում: Նա յիշել է նաեւ այլ հայ կամաւորների.

Ինք, ջլապինդ երիտասարդ, թուրքերու կողմէ որբացուած տղայ, կ'ուզէ սեւ այդ ֆաշիզմէն վրէժ լուծել: Երբ ներկայանայ առիթը, ոչ թէ մէկ առիթ, այլ բազմաթիւ: Մնտուկէն կը հանէ փաստաթուղթերը ու կը նայի երկար, երկար...

Մաքրուիին կը կարծէ, որ Հայկազը թուղթին կը նայի, մինչ մեր Հայկազը հեռուներն է... Սպանիոյ մէջ է, Պարչելոնի մէջ է, գէնքեր կը կրէ, գաղտնի գէնքեր կը մտցնէ Սպանիա, օգնելու համար այն հերոսներուն, որոնք Ֆրանքոյի դէմ կենաց մահու կռիւ կը մղէին...

Ինչ օրեր էին Հայկազ: Հայը որպիսի հեռաւորութիւններ, ովկիանոսներ կտրելով եկած միացած էր բարթիզաններու բանակներուն, որոնք մէկ անուն ունէին – Հակաֆաշիստ:

Աշոտ Անդրէասեանը Ամերիկայէն եկած էր: Կային տղաք, որոնք Ալեքսանտրէթէն եկած էին, Պէյրութէն ու Ֆրանսայէն եկած էին:

Ու Հայկազը եկած էր Յունաստանի որբանոցներէն ու տասնեակ, տասնեակ անգամներ հարիրաւոր գէնք ու զինամթերք մտցուցած Սպանիա:

Հայկազը Ֆրանքոյի դէմ կռուած էր...

Մեր Հայկազը²⁴:

²¹ Անդ, էջ 57:

²² Անդ, էջ 69:

²³ Անդ, էջ 73:

²⁴ Թորոս Թորանեան, *Երկիրներ եւ մարդեր: Վէպ բազմահարկիւր հերոսներով*, Հալէպ, ա. հ., 2004, էջ 384: Հայկազ Խաչատուրեանը ծնուել էր 1916ին եւ մահացաւ 10 Ապրիլ 1990ին: Նա մինչեւ 18 տարիքը եղել է Պէյրութի ՀԲԸՄի Քելեկեան որբանոցում:

Նշենք, որ Իսպանիայի քաղաքացիական պատերազմին մասնակցելու են մեկնել նաեւ սփիւռքահայերի աջ խմբաորումներից: Յունաստանում նախկին դաշնակցական խմբապետ Թորգոմը (Արսէն Թորգոմ, զօրավարի ինքնակոչ տիտղոսով), որը Յունաստանում կազմել է կամատրական խումբ եւ մեկնելով Իսպանիա՝ գործակցել է Իսպանիայի ղեկավար զօրավար Ֆրանկոյի ուժերին՝ ընդդէմ հանրապետութեան²⁵: «Տխրահոչակ ժէնէրալ (!) Թորգոմ, ան, որ իր 25 դաշնակ «ջան-ֆետրաներով» Հայաստանի անկախութիւնը հռչակեց... Կարինը ունենալով իբր մայրաքաղաք²⁶, եւ վերջերս դարձեալ հայ աշխատարար ժողովուրդի ճակատագրին հետ խաղալու ոճրապարտ փորձեր կը կատարէ՝ ժէնէրալ Ֆրանկոյի օգնութեան փութալով Իսպանիա մի քանի հայ ֆաշիստ ավանդիրիսներով...»²⁷:

Պատերազմից յետոյ Իսպանիայի իրավիճակի քաղաքական գնահատականը սփիւռքահայ մամուլում ծաւալուն յօդուածով փորձել է տալ վերապատուելի Արսէն Ա. Կէօրկիզեանը²⁸:

ԽՈՐՀՐԴԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է, որ խորհրդային ռազմական մասնագէտներ նոյնպէս մասնակցել են Իսպանիայի քաղաքացիական պատերազմին: 1936-38՝ պատերազմին մասնակցել է նաեւ գիմրեցի Թադէոս Մանդալեանը (1901-41), որը 1939ին նշանակուել է Իսպանիայում ԽՍՀՄ գործերի հաւատարմատար (մինչ այդ նա Հայաստանում մասնակցել է մայիսեան ապստամբութեանը, իսկ 1926-27՝ Չինաստանում կռուել է Շանհայի ապստամբների շարքերում): 1937-39՝ Իսպանիայում քարոզչական, հետախուզական, վնասագործական եւ պարտիզանական աշխուժ գործունէութիւն է ծաւալել խորհրդային հետախույզ Հայկ Թումանեանը (1901-71): Իսպանիայում կռուած խորհրդահայերի մասին մի ակնարկ գտնում ենք թատերագիր Ազնեսա Սետունցի *Նոյեմ* թատեխաղում, որի հերոսն ասում է. «Ահա իմ եղբայր Անդրանիկը... դեռեւս մինչեւ պատերազմը նա կայացած մարդ էր... Իսպանիայում է մարտնչել»²⁹:

²⁵ Սիմոնեան:

²⁶ Նկատի ունի Հայաստանի անկախութեան հռչակումը 1918 Փետրոարի 13ին, Կարինում (Էրզրում): Հայ պետականութեան վերականգնման մասին գրաւոր հռչակագիրն ազդարարել է Էրզրումի կայազօրի պարէտ գնդապետ Արսէն Թորգոմը (Արմէնուի Ղամբարեան, «Հայաստանի անկախութեան Էրզրումի հռչակագիրը», *Պարմաբանասիրական հանդէս*, 2018:3, էջ 258-63):

²⁷ Երուանդ Թոլայեան, *Կավոռ-Նամէ*, աշխ.՝ Հենրիկ եւ Արծուի Բախչինեաններ, Ստանպուլ, Արաս, 2019, էջ 506:

²⁸ Վեր. Ա. Ա. Կէօրկիզեան, «Ֆրանքոյի Սպանիան եւ աշխարհի խաղաղութիւնը», *Լրաբեր*, 18, 21, 28 Յունուար 1947:

²⁹ Агнесса Севунц, *Когда Шутит Хронос* (Երբ կատակում է Քրոնոսը), Երեւան, Կոլաժ, 2020, էջ 136:

Իսպանիայի քաղաքացիական պատերազմին իւրովի են արձագանգել խորհրդահայ շարքային քաղաքացիները, սակայն որպէս պետական քաղաքականութեան պարտադրուած գործողութիւններ: Հազար եւ մէկ կարիքի մէջ գտնուող Հայաստանում 1935-36ին օգնութիւններ են հաւաքել Իսպանիայի տուժած համայնավարների, նրանց կանանց եւ երեխաների համար: Այսպէս, 1935ի Յունուարին Երեւանի սպանդանոցի աշխատատրներն իրենց կէս օրավարձը (508 ռուբլի 77 կոպէկ) յատկացրել են Իսպանիայի մարտնչող պրոլետարիատին: Հայաստանի կենտգործկոմի միջազգային յեղափոխական օգնութեան մարմնի բջիջը եւս 195 ռուբլի 30 կոպէկ է յատկացրել Իսպանիայի պրոլետարներին³⁰: Նոյն ամսին Քանաքեռի գործարանի Գ. մասի պաշտօնէութիւնն իր օրականի կէսը՝ 3000 ռուբլի, յատկացրել է Իսպանիայի մարտնչող համայնավարներին³¹: Լենինականի շոգեկառքի մթերանոցում կայացած հանրահաւաքի ժամանակ հաւաքել են 2100 ռուբլի, Աշտարակի կանայք՝ 2547 ռուբլի, Ոսկեվազի գեղջկուհիները՝ 300, Երեւանի հեռագրատան կին աշխատողները՝ 160 ռուբլի³²: 1936ին Բերիայի անուան կոմունիստական գիւղգյւղոցի ուսանողները, դասախօսները եւ ծառայողները Իսպանիայի կամատրներին տրամադրել են իրենց մէկ օրուայ թոշակն ու աշխատավարձը (աւելի քան 600 ռուբլի), հրէշջները՝ 935, Երեւանի թուրքական մանկավարժական տեխնիկումը՝ 305, Սպենդիարեանի անուան երաժշտական թատրոնը՝ 161 ռուբլի, պետական հանրային գրադարանը՝ 584 ռուբլի 80 կոպէկ, «Արաբկիր» արտադրամասի ծառայողները՝ մէկ օրուայ աշխատավարձը, Սեւանի ձուկորեստի աշխատողները՝ 795 ռուբլի, կոյրերի միատրումը՝ 860, պետական թատրոնը՝ 1500, Հոկտեմբերեանի բամբակազտիչ գործարանի բանուորուհիները՝ 400, Երեւանի ուսուցիչների ինստիտուտի կին աշխատողները՝ 350, կարի արտադրամասի բանուորուհիները՝ 900, Արարատ տրեստի բանուորուհիները՝ 700 ռուբլի են., են.: Ինչպէս յայտնել է *Խոր-*

³⁰ «Իսպանիայի պրոլետարիատի համար», *Խորհրդային Հայաստան*, 10 Յունուար 1935:

³¹ «Օգնութիւն Իսպանիայի մարտնչողներուն», *Յուսաբեր*, 26 Յունուար 1935:

³² «Օգնութիւն Իսպանիայի», *Արագ*, 5 Նոյեմբեր 1936, էջ 2: Իդէպ, նման մարդասիրական ցոյցերը նորութիւն չէին Խորհրդային Միութեան եւ նրա մաս կազմող Հայաստանին համար: Այսպէս, 1925ին, մէկդի թողած սեփական կարիքատրներին՝ Հայաստանի կենտրոնական գործադիր յանձնախմբի եւ գործավարների խորհրդին առընթեր բջիջը նիւթական օժանդակութիւն է հաւաքել գերմանացի բանուորների համար, ապա նաեւ՝ 72 ռուբլի 88 կոպէկ հանգանակութիւն ուղարկել Էստոնիայի համայնավարների դէմ ձեռնարկած հալածանքների ժամանակ տուժած բանուորների ընտանիքներին (*Խորհրդային Հայաստան*, 26 Փետրուար 1925): Նման նախաձեռնութիւններով ողջ խորհրդային Միութեան աշխատատրութիւնը իբր իր լուման էր ներդնում միջազգային համայնավարական շարժման:

հրդային Հայաստան օրաթերթը, Երեւանի թիւ 26 մանկապարտեզից էլիկ Բեգլարեանը դաստիարակչուհուն է տուել իր ունեցած երեք ռուբլին՝ ասելով. «Ուղարկէք Իսպանիայի կոռուղներին»: Միւս երեխաներն էլ արծագանգել են էլիկին եւ ընդհանուր հաւաքել են 100 ռուբլի... Հարց է, թէ երբեւէ իրենց նպատակակէտին հասնել են արդեօք խեղճ հայ գործաւորների եւ գիւղացիների զոհողութիւնների գնով տրուած օժանդակութիւնները³³:

Այս շրջանում խորհրդահայ մամուլը յաճախակի նիւթեր է հրատարակել Իսպանիայի, նրա մշակոյթի վերաբերեալ³⁴: 1936ին Երեւանի երաժշտանոցի դահլիճում տեղի է ունեցել իսպանական երաժշտութեանը նուիրուած երեկոյ՝ ի համակրանք մարտնչող իսպանացի ժողովրդի³⁵: Հայաստանի հանրապետական ժողովրդական ստեղծագործութեան եւ ինքնագործ արուեստի տունը 1937ին ռուսերէնից թարգմանել է իսպանական յեղափոխութեանը վերաբերող *Նրանք չեն անցնի* թատերախաղը շրջանային ինքնագործ թատրոնների համար³⁶:

Խորհրդահայերը որոշ առնչութիւններ են ունեցել 1930-40ականներին ԽՍՀՄ ապաստանած իսպանացի համայնավարների հետ: Նրանց մի մասը հանգրուանել է Կովկասում: Հազարաւոր իսպանացի փախստականներ յայտնուել են Խորհրդային Միութիւնում, այդ թւում՝ յեղափոխական առաջնորդներ Դիուրէս Իբարրուրին եւ Խոսէ Դիասը, որը 1942ին Թբիլիսիում սպանուել է խորհրդաւոր պայմաններում³⁷:

³³ *Խորհրդային Հայաստան*, 12 Հոկտեմբեր 1936: Այս առթիւ դաշնակցական մի թերթ գրել է. «Հայաստան ու՛ր, Սպանիա ու՛ր: Ամէնքը իրար անցած են Խորհրդային Հայաստանի մէջ, մեծ ու պզտիկ: Չըլլա՛յ որ երբ մնան, չըլլա՛յ որ իրենց հաւաքարմութիւնը կասկածի տակ դրուի, չըլլա՛յ, որ բարեխնամ եւ բարեգութ մեծ Սթալինը վշտանալ» (Ասատուր, «Օգնում ենք Իսպանիայի», *Հայրենիք*, 17 Նոյեմբեր 1936): Թուելով վերոյիշեալ հանգանակութիւնները՝ նոյն յօդուածագիրը շարունակել է. «Կը տեսնե՛ք եռանդը, հայկական որեւէ ձեռնարկի, որեւէ նպատակի համար այսպիսի հապճեպով, եռանդով դրամահաւաքութեան մասին երբեւիցէ լսե՛ր էք Խորհրդային Հայաստան կոչուած երանելի երկրին մէջ: Օգնում ենք Իսպանիայի: ...Թող հրճուի Մալրիպի փախստական կառավարութիւնը, Խորհրդային Հայաստանի փոնքիշոթները կոչուած են փրկելու զինք, եթէ Իսպանիայի ժողովուրդը ինքը չ'ուզեր ընել այդ բանը» (անդ):

³⁴ Տե՛ս, օրինակ՝ Մ. Դ., «Կատալոնիայի հերոսները», *Խորհրդային արուեստ*, 1 Նոյեմբեր 1936. նաեւ՝ Լ. Նիկոլին, «Էլ Պրադօ թանգարանը», *Խորհրդային արուեստ*, 16 Նոյեմբեր 1936. նաեւ՝ Ֆ. Կելին, «Իսպանական թատրոն», նոյն:

³⁵ «Իսպանական երաժշտութեանը նուիրուած երեկոյ», *Խորհրդային Արուեստ*, 1 Յունուար 1937:

³⁶ «Արուեստի լրատու», *Խորհրդային Հայաստան*, 1 Սեպտեմբեր 1937:

³⁷ А. А. Сагомонян, «Попытки Развертывания Партизанского Движения в Испании (1944-1948 гг.)» (Իսպանիայում պարտիզանական շարժման ծաւալման փորձերը, 1944–1948 թթ), *Վոպրոսի Իսպորիի* (Պատմութեան հարցեր), 1998:6, էջ 138:

Իսպանացի համայնավարները եւ քաղաքացիական պատերազմի հերոսները, յատկապէս Դոլորէս Իբարրուրի-Պասիոնարիան (1895–1989), ոգեւորութեան աղբիւր են եղել խորհրդային ժողովուրդների, նաեւ հայերի համար: Արձակագրուհի Էլրա Գրինի (1928–2016) «Այդ զարմանալի խակի գոյնը» պատմուածքի հերոս Մաուլէն Եղիշեւիչը, յիշում է, որ իր կեանքում բազմաթիւ շրջաններ են եղել, որոնցից մէկն էլ եղել է Իսպանիան:

Թիֆլիսի օդաչուական ուսումնարանում իմ սովորելու ժամանակ Մադրիդը ռմբակոծում էր,- ասաց նա:- Ռադիօհաղորդավարուհին ասում էր իծվիս Մադրիդի, իծվիս Մադրիդիս կուչեբի, որ վրացերէն նշանակում է՝ Մադրիդը վառում է, վառում են Մադրիդի փողոցները... Նա յայտնեց, որ Թիֆլիսի օդանավակայանում տեսել է Դոլորէս Իբարրուրիին եւ ինքնագիր է խնդրել յիշատակի համար: Եւ Դոլորէսը շտապելով՝ թղթի պատառիկի վրայ հենց ինքնաթիռ բարձրանալիս գրել է մի հատիկ բառ՝ Կորդիալմենտէ, որ նշանակում է՝ Ի սրտէ:

- Բոցաշո՛ւնչ Դոլորէս Իբարրուրին: Պասիոնարիան,- բացականչեց նա: ...- Ամոր ա պրիմերա վիստա: Սէ՛ր առաջին հայեացքից,- գոչեց Մաուլէն Եղիշեւիչը³⁸:

1930ականների խորհրդային Հայաստանի գիւղի կեանքը պատկերող Առնոլդ Աղաբաբովի *Որտեղ էիր, մարդ աստծոյ* շարժանկարում (1992) յիշում է, թէ ինչպէս են ամուսինները ցանկանում իրենց նորածինն անուանել Խոսէ Դիաս՝ ի պատիւ վերոնշեալ իսպանացի յեղափոխականի, իսկ գիւղացիների խօսքուզրոյցում յիշում է Իսպանիայի քաղաքացիական պատերազմը (իդէպ, նշուած իրողութիւնները բացակայում են շարժանկարի գրական հիմքում՝ Զօրայր Խալափեանի համանուն վէպում):

1936ին խորհրդահայ մամուլում Իբարրուրիին նուիրուած բանաստեղծութեամբ (գրական արժէքից զուրկ) հանդէս է եկել Գուգարունի ծածկանուամբ մի հեղինակ³⁹: 1937ին բանաստեղծ Գեղամ Սարեանը (1902–76) հրատարակել է *Իսպանիայի պատրանի հերոսները* գրքոյկը: Այնտեղ «Ալվարօ» բանաստեղծութեան մէջ՝ նուիրուած ժողովրդական հերոսին, մասնաւորապէս ասում է.

³⁸ Էլրա Գրին, *Երազների փիեզերք*, Երեւան, Մաշտոց, 2004, էջ 190:

³⁹ Գուգարունի, «Դոլորէս Իբարրուրուն», *Կարմիր սպորոյ*, 31 Դեկտեմբեր 1936:

Թախօ գերի ափով կանաչ՝ Մի քաջ փղայ զինուած, Քայլում է լուռ դէպի առաջ, Հեփախուզման ելած: Թփուրների մէջ աննկար, Ճամփով արեալի, Ալվարօն է երիտասարդ Թռչեղոյից գալի:	– Իսպանիա, քեզ ազատութիւն Մենք կը բերենք արեամբ, Քեզ վառօդի ծովսն է պարում Հիմա ինչպէս սեւ ամպ. Ազատութեան արեւով վառ Կը ցրենք ամպ ու մէգ, Ու կը լինենք կոտում յամառ, Չենք նահանջի երբեք:
--	--

Արձակագրուհի Լիւսի Թարգիւլը (1905-55) 1939ին հրատարակել է *Դէպի Իսպանիա* վէպը, ուր կոչ է արել կամատրական ջոկատներով օգնութեան հասնել իսպանացի ապստամբներին: Իսկ հայազգի խորհրդային վաերագրող Արշա Օանեստովան (Յովհաննիսեան, 1906–90) 1936ին նկարահանել է *Ողջոյն Իսպանիայի պիոներներին* շարժանկարը:

Ամփոփելով ներկայացուած փաստական նիւթը՝ կարող ենք հաստատել Իսպանիայի 1936-39ի քաղաքացիական պատերազմում հայ ժողովրդի զաւակների մասնակցութիւնը (առնուազն՝ հարիւր հոգի): Յատկանշական է, որ եթէ ի համակրութիւն իսպանացի համայնավարների ԽՍՀՄի կողմից ի պաշտօնէ ուղարկուել են հայազգի մասնագէտներ, ապա տարբեր երկրներում ապաստանած հայեր (Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա, Բուլղարիա, Լիբանան, Յունաստան, Թուրքիա) այդ պատերազմին մասնակցել են միանգամայն կամաւոր սկզբունքով: Հայերը մարտնչել են թէ՛ հանրապետականների շարքերում, թէ՛ հանրապետականների դէմ: Օսմանեան քաղաքականութեան այլատեսացութեան եւ ցեղասպան քաղաքականութեան պատճառով հայրենագուրկ դարձած այդ հայերը պարզապէս չեն կարողացել հանդուրժել աշխարհի մէկ այլ մասում բռնկուած ֆաշիստականութիւնը եւ յաճախ իրենց կեանքի գնով նպաստել են ֆաշիզմի դէմ յաղթանակին:

Ինչ վերաբերում է խորհրդահայերին, ապա նրանց պարտադրուել է իրենց համակրանքն արտայայտել իսպանացի ժողովրդին դրամական նուիրատուութիւնների եւ Իսպանիայի վերաբերեալ տեղեկացուածութեան բարձրացման միջոցով, որի արդիւնքում իսպանական քաղաքացիական պատերազմն ու նրա հերոսները գրական նիւթ են դարձել միջանի հայ գրողների համար:

THE SPANISH CIVIL WAR AND THE ARMENIANS (1936-1939)

(Summary)

ARTSVI BAKHCHINYAN (artsvi@yahoo.com)

The participation of Armenians in the Spanish Civil War is almost unknown. At least one hundred Armenians from different countries (France, USA, Canada, Bulgaria, Turkey, Lebanon) participated in that war, on a completely voluntary basis, as members of special military units known as International brigades. These Armenians, who became stateless due to the xenophobia and genocidal policies of the Ottoman Empire, simply could not tolerate the outbreak of fascism in another part of the world and joined in the struggle against fascism, sometimes at the cost of their lives. Captain Vahan Chkayan, an officer in the Republican army, is an outstanding figure among these volunteers.

Several Soviet Armenian specialists were officially sent by the USSR to support the Spanish communists. During the war years, Soviet Armenian citizens, like all the peoples of the Soviet Union, were forced to express their sympathy for the Spanish people through donations and raising awareness of the events in Spain. They organized various cultural events and gatherings. The Spanish Civil War and its heroes became a source of inspiration for some Armenian writers.